

ԵՐԿԻՐ

Էջան 10, հաջորդական 30

Հուն 22, 2011

e-mail: erkir@armico.am

Անձնական բիզնեսն ընդդեմ գիտության

Արագացուցիչի փոխարեն մարզադաշտ են կառուցելու

Լուսանկարում պարկերված շինությունը, նման լինելով մարզադաշտի նմանվելով, ամենին էլ ֆուտբոլային խաղահրապարակ է: Այլ՝ մեր երկրի գիտական ներուժի շնորհիվ փասելյակ միջոցավոր դուրսերն արժեցող անսխաղեպ միջուկային արագացուցիչի համալիր, որի կառուցումը վրանգի փակ է. քանզի նույն փարածքում պարբաստվում են կառուցել մարզադաշտ:



Բարձր տեխնոլոգիաների զարգացումը Հայաստանում վերջին տարիներին նշանակել է որպես գիտության գերակա ուղիորդումներին մեկը, ինչը ենթադրում է, որ համապատասխան ծրագրերի իրականացումը իրանցի պետության քաղաքականության հատուկ և կարևորագույն խնդիրներից մեկն է: Մտնայն, ըստ ամենայնի, ոչինչ էլ ամենևին այնպես չէ, ինչպես ներկայացրվում է: Ի՞նչ բարձր տեխնոլոգիաների, գիտության զարգացման մասին է խոսքը, կրն մի օլիգարխ կարող է արտաբան վերցնել ու որոշել, որ իր սեփական ծրագրերի իրականացումն ավելի

կարևոր է, քան ոչ միայն պետության, այլև միջազգային մասշտաբով գերակա, էնտանկրային ծրագրի իրագործումն ու մեր սերնդի գիտական կենտրոնի կառուցումը: Ինչպիսի խիստ մտածողիչ է, քանզի այս փառազայտ խոսքը եզակի հնարավորության մասին է, որը մեր սերնդի արագացուցիչի կառուցման համար ստացել են մեր գիտնականները շնորհիվ ԱՄՆ պետության արտասննոր կողմից տրամադրվող 55 մլն դոլարի ֆինանսավորման:

Անձնական բիզնեսն ընդդեմ գիպուլթյան Արագացուցիչի փոխարեն մարզադաշտ են կառուցելու

ԵՋ 1

Աշխարհում գիտության զարգացմանը համաբայլ ընթանալու նպատակով Հայաստանում սինցրոտրոնային ճառագայթման նոր արագացուցիչի կառուցման անհրաժեշտության հարցը բարձրացվում էր դեռևս 1970-ական թվականներին՝ համաշխարհային հռչակ ստացած ֆիզիկոսների հայկական դպրոցի հիմնադիրներից մեկի Արտեմ Ալիխանյանի կողմից: Եթե այն ժամանակ գիտնականները ենթադրաբար պնդում էին, որ գիտության ապագան մեծապես կախված է լինելու արագացուցիչից, ապա այսօր արդեն դա աներկբա է: Պատահական չէ, որ աշխարհի զարգացած երկրներում գիտական հետազոտությունների համար առանցքային են նոր սերնդի մեծան սարքավորումները, ջանգի դրանք գործնականում անսահմանափակ հնարավորություններ են ընձեռում: Արագացուցիչները ներկայումս կիրառվում են ֆիզիկայի, քիմիայի, միկրոկենսաբանության, բժշկության, նյութագիտության, շրջակա միջավայրի, երկրաբանության, դեղագործության, մետալուրգիայի, հանքաբանության, միկրոէլեկտրոնիկայի և բազմաթիվ այլ բնագավառներում: Այսպես ՍՏ արագացուցիչների կառուցումը քանակ հանույթ է, և դրանք թիվը աշխարհում մեծ չէ հիմնականում տեղակայված են ԱՄՆ-ում, Եվրոպայում, Ճապոնիայում ու շահագործվում են որպես ազգային կամ միջազգային կենտրոններ: Եվս մի փաստ. աշխարհում այսօր տարբեր բնագավառներում արագացուցիչների կիրառման պահանջարկը 3-10 անգամ գերազանցում է առկա հնարավորությունը:

Ինչպե՞տ, գիտնացելով այս ամենը, ինչպես եմք հզոր ներուժ ունեցող ֆիզիկայի ազ-

գային դպրոցի պահպանման ու զարգացման անհրաժեշտությունը, նրանք տարի ատար Թի խումբ հայ գիտնականներ հանդես եկան նոր արագացուցիչ կառուցման ծրագրով: Շատ շուտով այն արժանացավ ամերիկյան հայտնի մեծահարուստ գործարար Ժիրայր Դովանյանի ուշադրությանը, և հայաստանյան ու սփյուռքահայ գիտնականների քանրերով հիմնադրվեց շահույթ չենտապրոֆիտ ոչ պետական ՔԵՆԴԼ (CANDLE) ընկերությունը, որի տնօրինությունը ստանձնեց ամերիկահայ նշանավոր գիտնական Ալեքսանդր Աբաշյանը:

Ծրագիրը ներկայացվեց ու հավանության արժանացավ ԱՄՆ-ի պետդեպարտամենտում, իսկ 2002 թվականին ՔԵՆԴԼ-ը 500 հազար ԱՄՆ դոլար դրամաշնորհ ստացավ ֆիզիկատեխնիկական նախագիծ մշակելու համար: 6 ամսվա ընթացքում նշված գումարի սահմաններում հայ գիտնականները մշակեցին և պետդեպարտամենտ երկրացորին մի նախագիծ, որի համար արտերկրում կապահանջվեր շուրջ 3 տարի և մի քանի միլիոն դոլար: Այդուհանդերձ, ամերիկյան գիտահետազոտական ասոցիատար ինստիտուտների փորձագետների խումբը բարձր է գնահատում կատարված աշխատանքը և նշում է, որ արագացուցիչի կառուցումը ոչ միայն տարածաշրջանի, այլև աշխարհի համար մեծ նվաճում կլինի: Փաստն այն է, որ այն ոչնչով չի զիջում նոր սերնդի արագացուցիչների նախագծերին, ինչպիսիք այսօր կառուցվում են Ֆրանսիայում, Անգլիայում և Կանադայում:

Այսպիսով, երբ բվում էր, թե դժվար ճանապարհն այլևս անցած է, ծրագրի իրագործումն այսօր վտանգված է: Խնդիրն այն է, որ բարձր տեխնոլոգիաների զարգացման

ու Հայաստանը տալու մարզադաշտային գիտական կենտրոն դարձնելու ջանադրվ մեր Կառավարությունը շարունակ ձգձգում է ՔԵՆԴԼ կենտրոնի հայաստանյան մասնաճյուղին արագացուցիչի կառուցման համար անհրաժեշտ 20 հեկտար հողատարածքի հատկացումը: Դեռևս 2001 թվականին համապատասխան շենք և տարածք տրամադրելու խնդրանքով կազմակերպությունը դիմել է ԿԳ նախարարության ու Կառավարությանը, և հաշվի առնելով ծրագրի կարևորությունը Կառավարության որոշմամբ, Ավանում գտնվող «Քիոմեդիկա» միջազգային դպրոցի շենքը տրամադրվել է կենտրոնին: Ենթին հարող շուրջ 90 հա տարածքի տրամադրման հարցը, սակայն, որից 20 հեկտարն անհրաժեշտ է զուտ սարքի, իսկ 70-ը դրա շուրջը գիտահետազոտական կենտրոնների կառուցման համար, հետաձգվել է ու մինչ օրս էլ ձգձգվում է ինչ-ինչ խնդիրների լուծման պատճառաբանությամբ: Ընդ որում, հիշյալ տարածքի տրամադրման վերաբերյալ ֆինանսների, արդարադատության նախարարությունների և պետական կադաստրի համաձայնությունը ստացվել է, իսկ Երևանի քաղաքապետարանի համար մեծ համաձայնություն կամ հարցին ինչ-որ կերպ լուծում տալու համար, պարզվում է, 6 ամիսն էլ չալական չէ: Ընդ որում, պատճառաբանությունը պարզապես ծիծաղելի է: «Հանդիպել ենք նախկին քաղաքապետին, նա հայտնել է, թե Կառավարության համապատասխան որոշման դեմ չի ատարվել: Այնպես այդ որոշման համար էլ մաքս քաղաքապետարանի համաձայնությունն է պետք: Այսպիսով, հայտնվել ենք փակուղային վիճակում: Ավելին, փետրվարին պետդեպարտամենտում, ՔԵՆԴԼ ծրագրի քննարկումից հետո, որոշվել է շարունակել ֆինանսավորումը: Այսպես ամերիկյան կողմը մասն ծրագրերի ֆինանսավորման և

իրագործման համար անհրաժեշտ նախապայման է համարում տվյալ երկրի Կառավարության համաձայնությունը և համապատասխան քաղաքական որոշումը դրա իրականացումն առարձային ճանաչելու, դրան ամեն կերպ նպաստելու վերաբերյալ: Առայժմ նման որոշում մենք չունենք, ինչի պարագայում, թերևս, տարածքի էլ այլ խնդիրներ չլինեք ունենա»,- ասաց ՔԵՆԴԼ կենտրոնի տեխնիկական տնօրեն, Տախագծի ղեկավար Կասիկ Ցավանովը: Երա խոսքով, ասանց Կառավարության համապատասխան վերաբերմունքի ու աջակցության, ծրագրին իրագործվել չի կարող, քանզի կան այլ խնդիրներ նա, որոնք կարող են լուծվել միայն պետական մակարդակով: Բայց, ըստ ամենայնի, պետության կողմից խնդրի կարևորման ու համապատասխան բարձր հովանավորության ապահովման մասին խոսք լինել չի կարող: Չավելշտալի ու անհեթեթ է, րայց, ըստ շրջանառվող լուրերի, ՔԵՆԴԼ-ի շուրջ ստեղծված վիճակի պատճառն այն է, որ Ավանի «Քիոմեդիկա» միջազգային դպրոցի շենքի հարակից տարածքը սեփականաշնորհելու հավակնություններ ունի, և ասում են, թե նույնիսկ մի մասն արդեն գնել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը: Այսու՞մ են նա ցանկանում է այդտեղ ֆուտբոլի դաշտ ու սպորտային հրապարակներ կառուցել: Մեկնարանությունները, կարծում ենք, ավելորդ են: Տավայի իրողություն է, որ հետխորհրդային ժամանակներում ԱՊՀ տարածքում ամենախոշոր գիտական ծրագրի իրագործումը, որը կարող է միլիոնավոր դոլարների ներդրումներ բերել Հայաստանին և մեր երկիրը իրավամբ դարձնել տարածաշրջանային գիտական կենտրոն, մնացել է օդում կախված:

Լ. ՂԱՍՏՅԱՆ